32. Միության ստորին մարմինները անցյալով ժամանակաշրջանում իրենց աշխատանքը հարմարեցնում են ին կրծառված նյութական բազային (անտամարմինների կողմէից կուլտֆոնդի ոգտին կատարվող մասնանումներից վերացումը): Ընդունելով վոր Կե-ի նյութական բազայի հետագա ամրացումը կախված է ամբողջ Միության ֆիսանսների ամրացումից, համագումարն այնուամենայնիվ, գտնում են, վոր տեղկոմների միջոցները ծախսելու կանոնավորումը միութենական մարմիններին հնարավորություն կտա ավելացնելու այդ միջոցների այն մասը, վոր հատկացվում է միության անդամների անմիջական սպասարկության համար:

Հավանություն տալով ԿԿ ցուցմունքներին տեղկոմների ֆիսանսական բազայի ամրացման և հասարակական աշխատանքի սկզբունքներով տեղկոմի անդամներին գործնական աշխատանքի քաշելու մասին, համագումարն առաջարկում է միութենական մարմիններին հետագա աշխատանքի ընթացքում դեկավարվել հետեւարով:

ա) Առ 11 կիսամյակն 1927 թ. ավարտել տեղկոմների միջոցների ապակենորոնացումը:

բ) Ապահովել միության անդամների անմիջական սպա-

սարկման միջոցների ավելացումն ի հաշիվ ապարատի նախքերի կրծառման:

գ) Մասնանել կուլտաշիատանքի համար վոչ պակաս, քան $10^0\%$ իրեկ վերահատկացում (հաճախություն) տեղկոմների պահպանման համար այնպես, վոր հետեւալ տարվանից կուլտաշիատանքի վրա կատարվող ծախսի այդ մասը հասցվի մինչև $25^0\%$ ի վրի համար և խնդրել Հ. Ա. Մ. կ Խ-ի թուլավությունը (տես ձանոթությունը բանաձեռի վերջում):

դ) Ավելի վճռականորեն կիրառել Կե-ի վորոշումները անդամավճարներից կատարվող այն մասնանումների մասին, վոր հանձնվում են ռայոնների և շրջանների (վոլոստեր) տեղկոմներին $10^0\%$ մինչև $30^0\%$ չափով, շրջանային և ռայոնական տեղկոմների կազմակերպչական և կուլտուրական աշխատանքներն ուժեղացնելու համար:

ե) Ամրողվովին թողնել պրոֆկոմների տրամադրության տակ ուստանողների ստացած թոշակներից ստացված մասնանումները:

XIII ԳԵՐՍՏՈՒԳԻԵԶ ՀՅԱՉՉՆՍ.Ժ.ՌՊ.ՌՎ.ՌԵՐԻ ՄԱՍԻՆ

33. Մատնանշելով, վոր վերստուգիչ հանձնժողովների աշխատանքն ընդհանուր առմամբ կենդանացել ե, մատնանշելով և այն, վոր միութենական մարմինների ֆինանսական աշխատանքի լավացման գործում վերջինների արթուն հսկողությունը ունի մեծ նշանակություն, համագումարն անհրաժեշտ և համարում ավելի լավացնել նրանց հետագա գործուներությունը:

Այդ նպատակի համար անհրաժեշտ ե.

ա) Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին ընտրել նույնական ինամքով: ինչպես և միութենական մարմինների ղեկավարներին:

բ) Վերստուգիչ հանձնաժողովները պետք է տեղյակ լինեն միութենական մարմինների ֆինանսական և տնտեսավարական ամբողջ աշխատանքին և սիստեմատիքաբար պետք է ստուգին միութենական մարմինների աշխատանքի այդ բնագավառները:

գ) Աշխատանքի այդ կողմերի ստուգումն ու հետազոտությունը ձևական բնույթ չպետք ե կրեն, այլ հայտնաբերելու ժեն միութենական մարմինների վարչատեխնիքական, տնտեսավարական և ֆինանսա-նախահաշվային աշխատանքի վիճակն ըստ ելյության:

Առանձնապես ուշագրություն պիտի գարձագիր վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքին ստորին ողակներում:

ՀԽՎՓՈԽԱԳՎԱԾՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆԵՐ

34. Համագումարն հավանություն և տալիս փոխողնության դրամարկղների վերակազմությանը, նրանց ավելի մեծ ինքնուրույնություն՝ տալու և անդամավճարները վերագարձնելու հիմունքներով, համաձայն արհմիությունների VII համամիութենական համագումարի վորոշումների և հանձնարարում և կերպ հաշվի առնել դրամարկղների այդ հիմունքներով տարած աշխատանքը և տալ տեղերին ցուցունքներ նրանց գործունեյությունն ուժեղացնելու և ամրացնելու համար:

Պահորություն 6, 9, 10: 27, լեզ 32 կ. կ.

Կենտրուսաշխի V գումարման VI պիհնումի բանաձեի 6-րդ կետի փոխարեն (միության գյուղական որգանների կառուցվածքի մասին) համագումարն հանեց հետևյալ վորոշումը:

Ի նկատի առնելով այն, վոր խոշոր կուլահիմնարկության մեջ և կենտրոնանում լուսաշխատավորների ամրող միութենական հասարակախնությունն ու ինքնագործնեյությունը՝ արտադրական և հասարակական աշխատանքի հարցերի շուրջը՝ պիենումը դեմ և արտահայտվում շրջանի (ВОЛОСТЬ) խոշոր հիմնարկություններում ինքնուրույն տեղիու կաղմակերպելուն, ինչպիս շքչանի կենտրոնում, այնպես իլ նրա մյուս վայրերում:

Ինքնուրույն տեղիումներ թույլ ե արդում կաղմակերպել միմիայն այն դեպքում, յեթե տվյալ հիմնարկությունն ունի 25 և ավելի աշխատավորներ, տնտեսապես մեկուսացած և և չի գտնվում շրջգործկոմի բյուջեյում:

Նույն բանաձեի 9-րդ կետի համաձայն, համագումարը վորոշեց սեղծել պյուղբյուրո, իբրև փորձ:

Նույն բանաձեի 9-րդ կետի § դ փոխարինված և սույն բանաձեի 32-րդ կետի § գով:

Համագումարի վերոհիշյալ վորոշումները, ինչպես նաև կերպ VI պլենումի վորոշումը, վոր հաստատված և համագումարի կողմէց՝ 15 աշխատակից լինելու դեպքում շրջանային տեղիումներ ստեղծելու հնարավոր դեպքերի մասին, մամուլի աշխատավորների սեղցիան ապագրակուն աշխատավորների միությանն անցնելու և սույն բանաձեի կ. 29, այն մասում, վորով բնագրային հաշվեատվության համար սահմանվում և մեկ տարվա ժամկետ, — կյանքի մեջ չպետք և կիրառվեն, մինչև վոր գրանք հաստատվեն Հ. Ա. Մ. կ. Խ-ի նախագահության կողմից:

ԲԱՆԱԳԵԼ ՏԱՐԻՖ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻԿ

(ԶԵԿ. ԲԵԿ. ԴԱԼԲԵԿ)

I ՆԵՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ժողովրդական կրթության նյութական բազան, սրա հետեանքով նաև լուսավորության աշխատավորների նյութական ապահովությունը վերջին յերկու տարվա ընթացքում բավականաչափ ամրացել են, թեև աճել են ավելի փոքր արագությամբ, քան մինչև Միության V համագումարի ժամանակաշրջանում:

Պետական և տեղական բյուջեներով ժողովրդական կրթության համար ընդհանուր համակացումները (ассигнования) 1924-1925 թվի 353,6 միլիոն սուբլուց 1926. 27 թ. բարձրացել են մինչև 615,9 միլ. սուբլու. (նախնական տվյալներով), ալսինքն $74\frac{1}{2}\%$ -ով, մինչզես ըստ բյուջեների ընդհանուր ծախսերը նույն ժամանակամիջոցում բարձրացել են 366,6 միլ. սուբլուց մինչև 588,1 միլ. և. (նախնական տվյալներ) կամ $60\frac{1}{2}\%$ -ով:

Խ. Ա. Հ. Մ-ում աշխատավարձը միջին հաշվով բարձրացել են առաջին աստիճանի դպրոցների ուսուցիչներինը 27 սուբլուց մինչև 40 և. 90 կ. (նախնական տվյալներ), $51,5\frac{1}{2}\%$ -ով. 2-րդ աստիճանի դպրոցների ուսուցիչներինը 33 և. 48 կոպեկից՝ մինչև 54 և. 58 կոպ. (նախնական տվյալներ) $63\frac{1}{2}\%$ -ով:

Վերջին տարիներս ժողովրդական կրթության վրա կատարված ծախսերի աճման տեմպի գանգաղումն այն ժամանակ, յերբ այն բացարձակ թվերով խոշոր չափով աճել է.

1923-24 թ. $100\frac{1}{2}\%$ -ով (112,3 միլ. և. մինչև 225,1 միլ. և.)

1924-25 » $57\frac{1}{2}\%$ -ով (մինչև 353,6 միլիոն և.)

1925-26 » $46\frac{1}{2}\%$ -ով (» 515,8 » »)

1926-27 » $20\frac{1}{2}\%$ -ով (» 615,9 » »)

Բացարձակ և բյուջեների աճման գանգաղումով, վորն իր հերթին հետևանքն է ամրող ժողովրդական տնտեսության այդ տարիների զարգացմանը ընդհանուր բնույթի:

Անցած ժամանակաշրջանում աշխատավարձի աճումը չետ և միացել ժողովրդական լուսավորության վրա կատարված ծախսերի աճումից, այդ համարականքն առաջ և յեկել նրանից, վոր մի-

կողմէց անհրաժեշտ եր լավացնել գործի ուսումնական—տնտեսական կողմբ, զորն այդ ժամանակ խիստ անբավարար վիճակումն եր գտնվում, մկուս կողմից անհրաժեշտ եր ընդորձակել ժողուսավորության մարմինների գործունեությունը, ի նկատի առնելով ազգաբնակչության աճած կուլտուրական պահանջները:

2. Յերկրի ինդուստրացումը, զոր ամրող ժողովրդական անտեսության զարգացման հիմնական գործուն և հանդիսանում, հետեւարար և աշխատավորների նկութական բարեկեցության լավացման գործունը, մոտակա շրջանում արտադրական կարիքների համար հսկայական ծախքեր և պահանջնելու Միենուն ժամանակ յերկրի ինդուստրացումը պահանջում և մասսաների կուլտուրական մակարդակի ավելի արագ վերելք, զորը կտպված և ժողովրդական լուսավորության ասպարիզում աշխատանքի ընդարձակման և ամրացման հետ ընդհանրապես, ընդհանուր ուսուցման ծրագրի իրականացման հետ առանձնապես:

Ժողովրդական լուսավորության ծրագիրը անտեսավարական գլխավոր գծի հետ՝ ամենաղեղար ինդիրն և, զոր մեր յերկրին ստիպված և լուծելու մոտակա տարիների ընթացքում:

Այդ խնդրի լուծման անհրաժեշտ պայմանն և հանդիսանում,

ա) բարձեցի ուսցիոնալ կառուցումը, բարձրացնելով ժողովրդական լուսավորության տեսակարար կշիռը տեղական և մասնավանդ պետական բարձեցում:

բ) Ցիշտ քաղաքականություն աշխատավարձի բնագավառում, զորն արտացոլելը լուսավորության աշխատավորների կարիքները և համաձայնեցված լիներ ինչպես ընդհանուր անտեսավարական ծրագրի (պլանի), այնպես ել արտադրության մեջ առանձին խմբերի տեսությանը կարար կշռի հետ.

գ) ժողովրդական լուսավորության համար բաց թողնվող միջոցների բացառիկ խնայողաբար և նպատակահարմար ծախուցը և

դ) Լուսավորության ամրող գործի սխտեմատիկ ու պլանաշափ ուսցիոնալիզացիան և առաջին հերթին լուսավորական աշխատանքի առանձին ճյուղերի վրա կատարվող ծախսերի մեջ համապատասխան փոխհարաբերություն սահմանելը:

Այսուոր պարագաներն են, զոր առաջիկա ժամանակաշրջանի համար վորշում են Միության տարիք-տնտեսական աշխատանքի հիմնական բովանդակությունը:

II ԱՇԽԱՏԱՎՈՐԸ ՅԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

3. Զնալած այն նվաճումներին, զոր ձեռք են բերված անցած այս յերկու տարվա ընթացքում լուսավորություն աշխատավորների աշխատավարձի բարձրացման գործում, վերջինս իր ոեալ արտահայտությամբ զեռևս հեռու յն նախապատերազմանցից: Լուսավորության աշխատավորների աշխատավարձի ավելի արագ բարձրացնելը, համեմատած այն խմբերի աշխատավարձի ամաման հետ, զորոնց աշխատավարձն արգեն հասել և նախապատերազման մակարդակին, նորից մնում և Միության զլիսավոր խնդիրը:

4. Մանկավարժական աշխատանքի աշխատավորների զըրութը ստորին մասսայական հիմնարկություններում՝ աստիճանի դպրոցներում, մանկատաներում, մանկապարտեղներում, զրադարձներում, խրճիթ-ընթերցարաններում, մշտական աշխատող լիկացաններում, կիսազգագետների զպրոցներում՝ պետք ել լինի միենունը յուրաքանչյուր տիպի հիմնարկության համար ընդունված աշխատանքի նորմալի համար:

5. Մատոնանշելով ստորին տեխնիքական ծառայողների աշխատավարձի առանձնապես ցածր մակարդակը և ի նկատի առնելով, զոր նրանց աշխատանքի շրջապատը լուսահիմնարկներում նըանցից պահանջում և լրացուցիչ վորակավորումն, զորպիսին չի պահանջում այլ տեսակի հիմնարկությունների աշխատավորներից, համագումարն անհրաժեշտ և համարում, հաշվի առնելով այդ լրացուցիչ վորակավորումը, բավականաշափ բարձրացնել նըանց աշխատավարձը:

Համագումարը նույնպես անհրաժեշտ և համարում ուժեղացնել փիզիքական աշխատանքի զորակյալ տեխնիքական աշխատավորների (փականագործների, մանտոյորների, հյուսների և ալլոն) աշխատավարձի աճումը:

6. Վերջին յերկու տարիներս տրանսպորտի լուսավորության աշխատավորների աշխատավարձը բավականաշափ բարձրացել և՝ այնուամենացնիվ զորոշ տեղերում և և աստիճանի դպրոցներում աշխատավարձն հետ և մնում տեղական բարձեցուվ գոյուրուն ունեցող աշխատավարձից և նույնիսկ՝ գերեսով հասատած նվազագույնից (մինիմումից): Համագումարը գտնում և, զոր հետագայում տրանսպորտի լուսահիմնարկի աշխատավարձի ամաման թափը չը պետք ել հետ մնա տեղական բարձեցում զըտնա-

ված լուսաշխատավորների աշխատավարձի աճման թափից, համենայն գեպս նրա մակարդակը չպիլի ցածր լինի, քան գեկի հատով սահմանված նվազագույնն է:

Հանձնաբարել կկ-ին մեջոցներ ձեռք տանել արագացնելու տրանսպորտի կուլտհիթների աշխատավորներին վարձատը բութիան զրութային (օքլածոյ) սիստեմին անցկացնելու գործը:

Ի նկատի ունենալով բնակարանային խիստ դժվարությունները, վորոնց մեջ գտնվում են լերկաթ դժի ուսուցիչները և վորոպիսի հանգամանքը ազդում ե նրանց աշխատավարձի ուեալ արժեքի ցածրացման վրա, — և նրանց աշխատանքի պայմանների նմանությունը զյուղական ուսուցիչների աշխատանքի պայմաններին, համագումարն անհրաժեշտ ե գտնում հարց հարուցել տարածելու աշխատավորների այդ խմբի վրա այն զեկրեալ, վորով բնակարանների և կոմմունալ ծառայությունների նկատմամբ գյուղական ուսուցիչներին արտօնություններ են տրվում:

7. Հաշվի առնելով այն, վոր զյուղական ուսուցիչների արտօնությունների մասին լեզած կանոնագրաւթյունը չի բնդրվում զյուղի ուսուցչական՝ մանկավարժական կազմի բոլոր խմբերը, հանձնաբարել կկ հարց հարուցել տարածելու այդ արտօնություններն հանրային բնույթի կրող շենքների (ուսելք) դպրոցների ուսուցիչների վրա, ինչպես նաև զյուղական վայրերի մանկական հիմնարկների ուսումնական գաստիարակչական կազմի վրա:

8. Բարձր տիպի, պրոֆտեխնիքական դպրոցներում, տեխնիկումներում, բուհ-երում և գիտական հիմնարկություններում գոյություն ունեցող աշխատավարձը չի արացողում այն բարձր վորակավորումը, վոր պահանջում ե այդ հիմնարկությունների համար, վորի հետեւանքով և բացակայում ե անհրաժշեն խթանը, ինչպես այդ հիմնարկություններում աշխատաղ վորակալ մանկավարժական կազմն ամրացնելու, այնպես ել այդ հիմնարկները պատշաճ վորակավորությամբ անձացող լրացնելու համար։ Համագումարը անհրաժշտ ե համարում, վորակավի բոլոր լուսաշտավորների աշխատավարձի ընդհանուր բարձրացման դեպքում, մատնանշված աշխատավորների աշխատավարձի բարձրացումն ավելի ուժեղացվի:

9. Համագումարն հաստատուր ե կկ ԱՎ պլենումի վորոշումները մանկավարժական զորի աշխատավորների համար պարերական հավելումների սիստեմը մացնելու անհրաժեշտության մասին, իբրև մեր արագության մեջ վարձատը թյան առավել

նպատակահարմար ձե այն կվալիֆիկացիայի համար, վոր ձեռք ե բերվում յերկարատև աշխատանքի պրոցեսում, և իրրի միջոց աշխատավորներին մանկավարժական սապարիվում ամրացնելու համար, և առաջարկում ե կկ այդ հարցը գնել որենսդրական մարմինների առաջ այդ միջոցը կյանքում կիրառելու մասին։

10. Մատնանշելով վոր մի քանի տեղերում քաղաքի աշխատավորների աշխատավարձի նկատմամբ կան աննորմալություններ, վոր արտահայտվել են քաղաքի աշխատավորների աշխատավարձի մակարդակի ցածրացումով համեմատած զյուղական աշխատավորների աշխատավարձի հետ, — անհրաժեշտ ե վոչ միայն թույլ չտալ, վորպեսզի քաղաքի ուսուցչի համար սահմանվի ավելի ցածր աշխատավարձ, քան զյուղական ուսուցիչների աշխատավարձն ե, այլ և պետք ե աշխատել բարձրացնել այն այնտեղ, վորտեղ կյանքի տնտեսական պայմաններն իրոք տարբերվում են զյուղականից։

11. Աշխատավարձի ֆոնովը բաշխելու ժամանակ պետք է ձգտել չմանրացնել այն զանազան տեսակի լրացուցիչ աշխատանքների վարձատը թյուն տեղով։ այլ զյուղավորակես, ոգտագործել այն հիմնական աշխատավարձի մակարդակը բարձրացնելու համար, աչքաթող չանելով այն, վոր վարչի աշխատանքն, անհրաժեշտ ե վարձատը իբրև անկախ աշխատանք։ Լրացուցիչ աշխատանքների վարձատը թյուն սահմանելիս, նրա չափն անհրաժեշտ ե խստորին համապատասխանեցնել այն լրացուցիչ բանվորական ժամանակի հետ, վորն իրոք ծախսվում ե այդ աշխատանքի վրա։

12. Մատնանշելով վորոշ նվաճումները, վոր ձեռք են բերված աշխատավարձը ժամանակին վճարելու և անցյալ տարիների ըուծարքի լենթարկու նկատմամբ, համագումարն ընդունում ե, վոր այդ հարցերը հետագալում ևս պետք ե մնան Միության ուշագրության կենտրոնում։ Ամեն մի առանձին զեղքում անհրաժշտ ե անմիջապես և վճռականորեն միջոցներ ձեռք առնել, այդ ասպարիզում կատարված որենսդրության և հավաքական պայմանագրերի խախտման ամեն մի գեղքի համար, մինչև մեղագորներին պատասխանատվության հրավիրելու։

Հանձնաբարել կկ աշխատելու վոր կուլտհիմնարկերի աշխատավորներին աշխատարարձը վճարվի աշխատանքի վայրերում։

13. Մի շարք վարերում աշխատավարձի պետական նորմի բարձրական անցկացնելու վորձերը և մ. Խ. Ֆ. Ա. Լուսժողկումա-

տի հիմնարկներում գրուցքային սիստեմ տնցկացնելու նախապատրաստական աշխատանքները ցուցի են տալիս, վոր նոր աշխատավարձի կարգավորման այդ սիստեմը ճիշտ է: Միութենական կազմակերպությունները պետք ե շարունակեն իրենց աշխատանքը, համաձայն Միության և համագումարի ցուցմունքների, միաժամանակ թույլ չտալով ցածրացնելու աշխատավարձի այն փաստական մակարդակը, վորին հասել են գրուցքային սիստեմը կիրառելու մոմենտին:

14. Վորովհետեւ մինչեւ աշխատավարձի պետական նորմիրով կալի կիրառումը աշխատավարձի կարգավորման համար իբրև գործնական սիջոց ֆում են հավաքական պայմանագրերը, համագումարն ընդգծում ե պայմանագրեր կնքելու աշխատանքները նորմալ կերպով տանելու չափազանց կարեռությունը և առաջարկում ե միութենական կազմակերպություններին այդ աշխատանքի միջ զեկավարվել հետեւալով.

ա) Հենց հավաքական պայմանագրերի կնքումը պետք ե խնամքով ու մասնակիրիտ կերպով նախապատրաստավի Միութենական մասսայական ժողովներում այնպես, վոր աշխատավորների ամեն մի խումբ հնարավորությունն ունենա մասնակցելու իր աշխատանքի բոլոր պայմանների վորոշելուն:

բ) Պայմանների ամեն մի բարեկավում, համեմատած նախակին հավաքայնագրերի հետ, Միութենական կազմակերպությունները առաջարկելու լին ինկատի առնելով այդպիսիք կյանքու կիրառելու ուսալ հնարավորությունները:

գ) Իբրև կանոն, պայմանագրիր կնքելու լի Միությունը, — վոչ ցածր քան զավառական կամ շրջանային (օքրյաշի) բաժնմունքներից բոլոր աշխատավորների համար: Առանձին զեպքերում շրջանային (օքրյաշի) կամ զավառական բաժնմունքի լիազորությամբ, ուայնական կամ զավառակային (ՅՈԼОСՏԻՈՅ) տեղկումը կնքում ե պայմանագրիր կամ տարիքային համաձայնություն. լիթե նահանգական, մարզային կամ յերկրային բաժինը ընդհանուր պայմանագրիր չի կը նշում, ապա անհրաժեշտ ե ժամանակին տալ գործկոմի հետ համաձայնցրած դիրեկտիվներ, ինչպես Միության գծով, այնպես ել վարչական մարմինների գծով, վորոնք պիտի վորոշեն շրջաններում (ՅՈՒՐԳԱՀ) և զավառներում պայմանագրեր կնքելու պայմանները:

15. Գլխավոր պայմանագրերը, վոր կնքում են կենտրոնա-

կան Կոմիտեներն ու կենտրոնական վարչությունները, պետք ե լայն կերպով քննության առնվելու այն աշխատավորների արհետակցական միավորություններում, վորոնց վրա այդ պայմանագրերը տարածվում են: Ամբողջ պայմանագրի մշակումը և նրա ստորագրումն այնպիսի հաշվով պիտի տարվեն, վորպեսդի պայմանագրի ուժի մասնելու սկիզբը և նրա ձեսկերպումը զուգագիտվեն նախորդ պայմանագրի գործողության դադարելու մոմենտի հետ:

Գլխավոր պայմանագրեր լինելու դեպքում: տեղական (լուկա) համաձայնություններ կնքելը թույլ տալով, համագումարը գտնում ե, վոր կենտրոնացված բյուջեի հաշվին վճարվող տշխատավարձի չափը պետք ե սահմանվի կենտրոնում:

16. Հաշվի առնելով մի կողմից՝ գլորոցական ցանցի արագ ծագալման անհրաժեշտությունը և տեղակտն բյուջեի անբավարությունը բոլոր բացվող կուտահիմնարկությունները լիովին պահպանելու համար մյուս կողմից՝ հաշվի առնելով ազգաբնակության հսկայական շահագրգումածությունը զպրոցով, վորն արտահայտում ե բացվող զպրոցների պահպանությունն իրենց հաշվին վերցնելու ձգտումով (պայմանագրային զպրոցներ), — համագումարը նման զպրոցներ բացելն ու նրանց գործելն համարում ե թույլատրելի, ըստ վորում նրանց նորմալ պահպանման լրիվ պատասխանատվությունն ընկնելու լի ժողովրդական լուսավորության մարմինների վրա: Լուսավաժիններն ամբողջովին և ամբողջ տարվա ընթացքում պետք ե ապահովին պայմանագրային զպրոցների աշխատավորների աշխատավարձն նույն չափով և նույն պայմաններով, ինչ վոր տեղական բյուջեում գտնված զպրոցների աշխատավորներին ե:

III. ՏՆՏԵՍՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՑՄԱՆ ԱՌԱՋԵՐԸ

17. VI Համագումարն արձանագրում ե, վոր V համագումարի վորոշումը «անտեսական աշխատանք ամբողջ գծով ծավալելու» մասին անցած ժամանակակալացանում բավականաշափ իրարականացված և միութենական կազմակերպությունների գործունելությամբ: Այդ աշխատանքի հետագա զարգացումն ու խորացումը համարելով անհրաժեշտ, համագումարը միութենական կազմակերպությունների ուշադրությունն ե հրավիրում հետեւալ մունացների վրա,

18. Ինկատի ունենալով այն, վոր լուսավորության աշխա-

տավորների աշխատավարձի և աշխատանքի նորմաների հարցելը
իրենց հիմնական կողմերով կանխորոշվում են բուշին կազմելու
աշխատանքի պրացեսում, վորն և հավաքական պայմանագրեր
կնքելու համար վիճակոր նախադրյալներն և ստեղծում, միութե-
նական կազմակերպությունները հետաքարում ևս պետք եւ ակտիվ
— հիմնավորված առաջարկություններով, — մասնակցություն ցուց
տան բյուջետային աշխատանքներին և միութենական մասսանե-
րի առաջ լուսաբանեն նրա ընթացքը:

19. Միությունը, մասնակցելով այն մարմինների աշխա-
տանքներին, վորոնք պլանավորում, վեկալվարում են ժողովրդա-
կան լուսավորության և զիտական, տեխնիքական հիմնարկների
գործը, պետք եւ հատուկ ուշադրություն դարձնի աշխատանքի
գործը, պլանավորությանը, այդ աշխատանքի համար ներ-
այլ տեսակի պլանավորությանը, այդ աշխատանքի համար ներ-
կայացուցիչների ջոկելուն և նրանց աշխատանքների վրա սիս-
տեմատիկ զեկավարություն կազմակերպելուն:

20. Արտադրական խորհրդակցություններն, իրեն մասսայա-
կան տնտեսական աշխատանքի հիմնական կազմակերպչական ձև,
մեր արտադրության պայմաններում մասսայական հիմնարկու-
թյունների համար տնկինուուսակ հանդիսացան: Կկ Ն պլենումի
վրայումներից հետո կիրարկված մասսայական տնտեսական աշ-
խատանքի նոր ձեռքը վորոշ չափով աշխատացրին այդ աշխա-
տանքը, նպաստեցին լուսաշխատավորների լայն մասսաներին
նրա մեջ ներզրագիրելուն և ստորին միութենական մարմինների
ակտիվությունն հայտնաբերելուն: Ամբողջովին հաստատելով կկ
IV պլենումի վորոշումները տնտեսական աշխատանքի ասպարի-
ցում, համագումարն առաջարկում է միութենական կազմակեր-
պություններին մասսայական տնտեսական աշխատանք տանի-
լիս զեկավարվել այդ վորոշումներով:

21. Ինչպես ժողովրդական լուսավորության մարմիններում
այնպիս ել նրա առանձին հիմնարկություններում զեկավար աշ-
խատանքների համար առաջ քաշելը միութենական մարմինների
աշխատանքների ընթացքում շատ թուզ կերպով և արտահայտ-
վելու հաշվի տնտելով արտադրության վորակը քարձրացնելու հա-
մար Միության այդ տեսակի աշխատանքի կարեռությունը
միութենական կազմակերպությունները պետք եւ ուժեղացնեն ի-
րենց ուշադրությունը առաջ քաշումը կազմակերպելու վրա
ստեղծելով առաջ քաշվածների կազմ և միութենական մասսային
ներզրագիր այդ թեկնածությունների քննության գործում

Միութենական մարմինները պետք եւ միջացներ ձեռք առնեն
ստեղծելու համապատասխան շրջապատ առաջ քաշվածների աշ-
խատանքի և աղմինիստրացիայի կողմից՝ նորմալ վերաբերմունք
դեպի նրանց:

22. Մեր արտադրության մեջ խնայողության ռեժիմի խըն-
դիրները, զեկավարապես, պետք եւ արտահայտվեն նրանով, վոր
նպատակահարմար ձեռվ ոգտագործվեն բաց թողնված միջոցները,
մշակվեն միջոցներ լուսավորության գործի ոացիոնալիզացիայի
համար, ձիւտ կերպով կազմակերպեն կուլտուր-լուսավորական
հիմնարկությունների ցանցը, ինչպես նաև՝ ամեն կերպ լավաց-
վեն ուսումնական գործարակչական աշխատանքի վորակը: Միու-
թենական կազմակերպությունները պետք եւ խնայողության ռե-
ժիմի աշխատանքի մեջ քաշեն լուսաշխատավորների լայն մաս-
սաներին և մասնակցեն ժողովրդական լուսավորության մարմին-
ների և ԲԳՏ այդ ասպարիզում տարած բոլոր աշխատանքներին:

23. Բնդիանուր ուսման կիրապումը զառնում է ժողովրդա-
կան լուսավորության մարմինների գործունելության կենարունը:
Համագումարն առաջարկում է միութենական կազմակերպություն-
ներին նույնական կենարունացնել իրենց ուշադրությունը այդ հար-
ցի լուծման վրա, զեկավարապես ի նկատի ունենալով այդ աշ-
խատանքը պլանավոր կիրառելու՝ անհրաժեշտությունը, հաշվի
առնելով սեալ հասարակությունները և ապահովելով գպրոցա-
կան աշխատանքի վորակն ու աշխատավարձի անհրաժեշտ ա-
ճումը:

24. Մանկավարժական կազմի նախապատրաստման գործը
այնքան ել բավարար վիճակում չե, այդ պատճառով V պլենումը
Ռ. Խ. Ֆ. Ս. Հ. և Ա. Խ. Խ. Ս. Հ. լուսաժղոմների հատուկ զեկու-
ցումների առթիվ ընդունեց մի շաբաթ գործնական վորոշումներ:
Միությունն նեանելու յի, վորպեսզի այդ վորոշումները իրենց պատ-
շաճ տեղն ունենան կուրսաժինների աշխատանքներում, և իր
կողմից ել ցուց տա ամեն տեսակի ոժանդակություն՝ այդ վորո-
շումները կանքի մեջ կիրառելու համար, մացնելով մանկավար-
ժական կրթության հարցերը իր տնտեսական աշխատանքի պը-
տանի մեջ:

| V ԱՇԽԱՏԱԾԱԿԲԻ ՊԱՇՑՊԱՆՈՒԹՅՈՒՆ

25. Ժողովրդական լուսավորության համար բաց թողնված դումարների սահմանափակության հետևանքով կուլտուր-լուսավորական հիմնարկություններում մինչև օրս նկատվում է սահմանափական-առողջապահական և արտադրական պայմանների բացակայությունը, պայմանների, վոր ապահովում են նորմալ մանկավարժական աշխատանքի հնարավորությունը: Դարձողական շենքերի խիստ անբավարար վիճակը, պարագմունքների բազմահերթությունը միևնույն շենքում, ծանրաբեռնվածությունը աշակերտներով և իմբերով, ուսումնական սարքավորման անհամապատասխանությունը աշխատանքի նոր ծրագրերին և մեթոդներին դեռևս բնորոշում են այն ըրջապատը, վորի մեջ ընթանում է լուսաշխատավորի աշխատանքը:

Ժողովրդական լուսավորության նյութական բազայի ամբացումը թույլ է տալիս դնել լուծելու համար աշխատանքի ընդհանուր պայմանների պլանաչափ առողջացման հարցերը, վորոնք դառնալու յեն Միության աշխատանքի հիմնական խնդիրը աշխատանքի պաշտպանության ասպարիզում:

26. Մատոնանշված խնդիրներից բղխող միջոցները կարելի յեն իրականացնել միայն աշխատանքի պաշտպանության պետական մարմինների ամենաակտիվ ոժանդակությամբ: Յուրաքանչյուր գեղքում, յերբ տնտեսավարական մարմինները կհրաժարվեն կյանքի մեջ կիրառել աշխատանքի պաշտպանության անդական հանձնաժողովների կոնկրետ առաջարկությունները, միութենական կազմակերպությունները պետք է տեղեկացնեն աշխատանքի որդաններին ներդրծման որդինական միջոցներ ձեռք առնելու համար: Բացի գրանից, պետք է աշխատել, վոր աշխատանքի տեսչության հետազոտման ծրագրի մեջ մացվին նաև կուրտուր-լուսավորական հիմնարկությունները:

27. Ծառայության տարիների կենսաթոշակի վերաբերյալ որենքը հաւանաբերեց իր գրական նշանակությունը, թե պրոֆեսիոնալ աշխատավորներուն կորցնելու հետևանքով շարքերից գուրս ընկնազ աշխատավորներին ապահովիում նկատմամբ եթե արտադրության շահերի տեսակետից, իբրև մի խթան, վոր մնացած աշխատավորներին զրում է շարունակելու իրենց մանկավարժական աշխատանքը:

Համագումարն հանձնարարում է կերպությունների հա-

մապատասխան պետական մարմինների առաջ ինչպես թոշակառւների շրջանն ընդարձակելու, այնպես ել կենսաթոշակի չափը մեծացնելու մասին:

28. Աշխատանքի պրակտիկան՝ լուսաշխատավորների իրավունքների պաշտպանության ասպարիզում՝ ցույց տվեց, վոր անհրաժեշտ է հաստարակել հատուկ որենքներ, ի նկատի ունենալով, վոր աշխատենսգիրքը վորոշում և աշխատանքի հիմնական պայմանները և չի ընդգրկում մանկավարժական աշխատանքի լուրահատուկ առանձնահակությունները: Համագումարը հանձնարարում է կերպությունների մասին հատուկ որենքներ մանկավարժական աշխատանքի մասին և տնցկացնել գրանք որենքնադրական կարգով, ըստ հնարավորության 1927-28 ուսումնական տարվա սկզբին:

29. Միության կրտմից լուսաշխատավորների կենցաղի ուսումնասիրությունը ամենաիրական լիզանակն է նրանց կարիքներն ու պահանջները հայտնաբերելու համար: Աշխատանքի այդտեսակին մեր Միությունը ուշագրություն բավարար չափով չի դարձրել: Համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղացնել այդ աշխատանքը, անցկացնելով այն պլանալին կարգով և առաջին հերթին ուշագրություն դարձնելով լուսաշխատավորների ընդհանուր բնուշելի և ժամանակի բնուշելի ուսումնասիրության վրա, իբրև նրանց կենցաղը բնորոշող և պարզող հմնական պայմանները:

30. Լուսաշխատավորների կենցաղը բարեկալելու համար ձեռնարկուծ միջոցների կիրառումը, այն և ժամանակների համար հանրակացարանի, հասարակական սննդի, աշակերտաների, զյուղական լուսաշխատավորների համար հանրակացարանինարի, մասուրների, մունկավարտեղների կազմակերպումը և ազնի, բավականաչափ չեն արտացոլվել միութենական մարմինների աշխատանքում: Այն ինչ միութենական ոգնության այդ տեսակների կարիքն զգացվում է ամենուրեք: Համագումարը խորհուրդ է տալիս միութենական կազմակերպություններին գեղի այդ ավելի մեծ ուշագրություն դարձնել, միաժամանակ աշխատելով տնտեսարմիններից ձեռք բերել ոգնություն նրանց անհրաժեշտ շենքեր և լուսաշխատավորների լերեխաների համար զիշերութիւն տիպի հիմնարկություններում ձրի տեղեր հատկացնելու ձեռք:

31. Մանրածախս գների իջեցմանը, իբրև աշխատավարձի ուեալ նշանակություն ամրացնող մի միջոցի, տալով բացառիկ

նշանակութիւն, համագումարը շեշտում և այդ գործին ակտիվ կերպով նպաստելու ոնհրաժեշտությունը, ուժեղացնելով միութենական մարմինների և լռուաշխատավորների մասնակցությունը սպասողական կոռպերացիացի աշխատանքներին:

32. Զնայած լռուաշխատական հիմնարկությունների աճող ցանցին, վորը աշխատավորների բավականաչափ նոր կազմեր և կլանում, գործազրկությունը շարունակում և աճել և վերջին տարվա ընթացքում հասել 82.188 հոգու: Համագումարը մտանալում է, վոր միութենական մարմինները մեծ ուշագրություն պիտի դարձնեն այդ հարցի վրա և գործազրկության դեմ պարարելու համար իրեն կոնվենտ միջոցներ առաջարկում և զեկավարվել են Վլ պլենումի վորոշումներով:

33. Բնակարանային սուրբ կրիզիսը գեռ ևս զգալի յե մասնական խոշոր քաղաքներում: Ազգ չերմուլիթը վերացնելու գործուներից մեկը բնակարանային կոռպերացիան է, վորը մինչև վերջին ժամանակը լռուաշխատության աշխատավորների մեջ շափականց թուլլ եր զարգանում: Համագումարն առաջարկում է միութենական կողմակերպություններին բնակարանային կոռպերացիակի հարցերը գնել, իրենց աշխատանքի կարեռագույն խոնդիրը, հաշվի առնելով, վոր բնակարանային նորմալ պայմանները առանձնահատուկ կարեռություն ունին լռուաշխատավորի համար, վորի աշխատանքի մի նշանակալից մասը տանը և ընթանում:

Դրա հետ միասին համագումարն անհրաժեշտ և համարում, վոր լրացուցիչ բնակելի տարածության իրավունքը տարածվի մանկավարժական գործի աշխատավորների վրա:

Նոր պարուցական շենքեր կառուցելիս պետք և աշխատել ապահովելու բնակարաններով մանկավարժական և տեխնիքական կազմին:

34. Հաստատելով, վոր մանկավարժական աշխատանքի և լռուաշխատավորների մեջ պրոֆեսիոնալ հիմնագացման գիտական ուսումնասիրությունը կարեսը և, համագումարն առաջարկում է կե շարունակել այդ աշխատանքը, թե հենց իրեն մանկավարժի աշխատանքը (բանվորական ժամանակի նորմերը, աշակերտներով ծանրաբեռնված լինելը, հաստիքները, ծրագրերը, աշխատանքի մեթոդները և այլն) և թե կենցաղը սացիրնալիզացիայի լինթարկելու նպատակով, ըստ վորում:

ա) ուսումնասիրությունը տարվելու յե աշխատանքի և պրո-

ֆեսիոնալ հիվանդությունների պետական ինստիտուտների միջոցով, աշխատելով, վոր այդ հիմնարկությունների ծրագրում մասնեն նաև լռուաշխատավորական խմբերը.

բ) ուսումնասիրությունը պետք և ունենա կոնկրետ նպատակային բնույթ, վորը թուլլ և տալիս հանելու այս կամ այն գործազրկությունների ուժությունը, մասնավորապես՝ պրոֆեսիոնալ աշխատաւնակությունը կորցնելու գեղքում կենսաթոշակ սահմանելլ:

գ) լռուաշխատավորների աշխատանքի ընդհանուր պայմանների հետազոտությունը կազմակերպվում և միութենական կազմակերպությունների ուժերով և միջոցներով: Տեղերում այդ աշխատանքը պետք և կատարվի խիստ պլանավին կարգով, կե հանձնարարությամբ և զեկավարությամբ: Համագումարն անհրաժեշտ և համարում ձեռնարկելու վաստակար պրոֆեսիոնների (քիմիագան լաբորատորիաների, անատոմիական (կազմախոսական) թանգարանների), լռուաշխատավորների խմբերի աշխատանքի պայմանների ուսումնասիրությանը:

V. ԿՈՇՔԵԿԱՏՍՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

35. Մատնանշելով միութենական կազմակերպությունների նշանակալից նվաճումները լռուաշխատավորների իրավուկան գրության պաշտպանության գործում, համագումարն անհրաժեշտ և համարում հետազություն ևս այդ աշխատանքը շարունակել անդուր յեռանգով, աշխատելով լիովին վերացնել լռուաշխատավորների աշխատանքալին իրավունքների խախտման զեղքերը:

36. Անցած ժամանակաշրջանի փորձը ցույց է տալիս, վոր մի քանի միութենական մարմիններ զեռ ևս բավականաչափ ուշագիր կերպով և ժամանակին չեն տնդրագառնում տեղերում ծուգած կոնֆլիկտներին, վորի հետահանքով և կոնֆլիկտների լուծումն, անցնելով շատ ինստանցիաներով, ձգձգվում է. համար կենտրոնական մարմիններն են ուղղվում կոնֆլիկտներ, վորոնք տեղերումն ենին լուծվելու: Համագումարն անհրաժեշտ և համարում, վորպեսզի միութենական մարմինները ձեռք առնեն բոլոր միջոցները կոնֆլիկտները տեղերում լուծելու տասնց ավելորդ ձգձգումների, խիստ հակոգություն սահմանելով Գ. կ. Հ -ում գործերը ժամանակին անցնելու և ընդունված վճիռները կը առ կերպելու վրա:

37. Ծնորհիվ հենց կուլտ հիմնարկների կառուցման և նըանց փինանսավորման լուրահատուկ պայմանների, Գ. Կ. Հ.-Նեղի գույություն ունեցող սխեման հաճախ չի կարողանում Միության անդամների նորմալ սպասարկումն ապահովել: Հոկայտկան նշանակություն տալով ԳԿՀ զործունելությանը լուսաշխատավորների աշխատանքաբին լիրաշխիքների պաշտպանության գործում, համագումարն հանձնարարում է ԿԿ, ԳԿՀ մասսաներին ավելի ես մերձեցման հիմունքներով մշակել նրանց կազմակերպման կարուն և հաստատուն սխեմա: Այս հիմնարկությունների աշխատավորները, վորոնք ընդդրկում են տվյալ սկզբնական արհմիութենական մարմինը, պետք է սովորակիվեն իրենց ԳԿՀ-ով: Յելակետ ունենալով այն, վոր կուլտ հիմնարկները մեծ մասամբ միաժամանակ լինթարկում են իրենց իրավասությամբ տարրերի վարչա-անտեսավարական մարմինների, ԳԿՀ գունդիցիաները պետք ե վրոշվին այն տնտեսարմնի իրավունքներով, վորը ներդիտյաց ված է նրա մեջ: Տվյալ տնտեսավարական մարմին կոմպետենցիալի սահմաններից զուրս մեացող հարցերի լուծման համար, բարձրագիր վարչա-անտեսավարական կենտրոններին կից ստեղծվում են հատուկ ԳԿՀ:

VI. ՍԱՆՍԱՑՈՒԹ-ԿՈՒՐՈՒՏԱՅԻՆ ՈԳ-ՆՈԽԹՅՈՒՆ

38. Մեր միության անդամներին ցուց տված սահմանողակուրուտային ոգնությունը վիրջին յերկու տարվա ընթացքում հասկել ե բավականին նշանակալի չափերի, վոր հետեւնք է միութենական կազմակերպությունների ակտիվ գործունելության և Սոցապենտվարչության ու նրա մի քանի տեղական մարմինների ցուց տված նույթական ոժանդակության: Զնայած դրան, իրենց առողջությունը վերականգնելու կարիքն ունեցողների բավարարման տոկոսը դեռ ես անհշան ե:

Այդ պատճառով միութենական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն միության անդամների ոգնության հետագա ծավալումը թե միութենական հանգստյան տների ընդարձակման գծով, սոցապի մարմիններին ել ավելի մեծ չափով նշութական ոժանդակություն հրավիրելով, ձգտելով հժանացնելն ըրանց արժեքը, և թե աշխատելով մեծացնել պետական հանգստյան տների և սահմանադարձաների կողմից լուսաշխատավորների սպասարկումը:

39. Համագումարն հանձնարարում է ԿԿ, հարց հարուցել

համապատասխան մարմինների առաջ, վորպեսզի սահմանորակուրուտային ոգնությամբ և հանգստյան տներով սպասարկելու տեսակետից լուսաշխատավորներն հավասարեցվելին ֆիզիքական աշխատանքի անձանց:

40. Կուրուրուտային վայրերում կկ կազմակերպած կենտրոնական հանգստյան տների յերկու տարվա գոյության պրակտիկան լիովին արգարացրեց իրեն:

Ի նկատի ունենալով, վոր սահմանորակուրուտային բուժումը Սոցապի գծով անբավարար է և լուսաշխատավորների կարիքն այդ տեսակի բուժման նկատմամբ հսկայական, ի նկատի ունենալով և այն, վոր կենտրոնական հանգստյան տներն ողում են մեծ թվով միության անդամների, առավելապես ցածր վարձատրվողներին, ստանալու սահմանորակուրուտային բուժման, համագումարն անհրաժեշտ է համարում ձեռք առնել միջներ ամրացնելու և վորակով լավացնելու կենտրոնական հանգստյան տները:

41. Ծնորհիվ այն հանգստյանքի, վոր կուրուրուտային վայրերում գործելու մեջ բացառակես սահմանորային ընությի հանգստյան տներ, վորը պահանջում է մեծ ծախսեր և բարդ կազմակերպություն ու զեկվարություն, համագումարն անհնարինական պահանջար և գտնում, վորպեսզի առանձին տեղական կազմակերպությունները կուրուրուտային վայրերում ունենան իրենց հանգստյան տները բացի կուրուրուտային վայրերում գտնված կազմակերպություններից:

ԲԱՆԱՁԵՎ, ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎԱՐԱԿԱՆ ՍՇԽԱԾԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԻ
ԱՌԹԻՎ:

(ԶԵԿՈՒՐՈՎ ԱՅԿ. ԳԻԳԱԼՈՒ)

ՀԱՄԱՍԿԱՆ ԽԵՂԴԵՐՆԵՐ

1. Վ և Վ համագումարների մեջ ընկած ժամանակամիջոցում միությունը լայն կերպով ծավալեց միութենական մասսայի քաղաքական լուսավորության աշխատանքը: Այդ աշխատանքը նպաստեց լուսաշխատավորի վերադաստիարակմանը, նրանց խորհրդակին հասարակականությանը հաղորդակից գարձնելուն, նրանց քաղաքական գիտակցության և հասարակական ակտիվության աճման:

Մասսալական կուլտ աշխատանքի այս առաջին ըրջանի (Համամբութենական ուսուցչական համագումարի շրջանի) ամենակարևոր արդյունքն այն է եղավ, վոր զբուղական ուսուցչությունն հայտնաբերվեց, իբրև խոշոր հասարակական ուժ և խորհրդական իշխանության համար մի լուրջ ոգնական գլուղում:

Միութենական կուլտաշխատանքի հիշյալ շրջանը առավելապես ազիտացիոն եր (ուսուցչությանը զիմովին հասարակական աշխատանքի ներգրավելու, մասսաներին խմբակների մեջ քաշելու և այլն լրացնգները), բայց ուսուցչական համագումարից և միության V համագումարից հետո, շնորհիվ լուսաշխատավորի կուլտուրական պահանջների և հասարակական ակտիվության աճմարդական գործում և ավելի խորացրած և ավելի լին հարմարեցվում լուսաշխատավորական մասսական առանձին շերտերի և խմբերի առանձնահատկություններին:

2. Յեղակետ ընդունելով այն, վոր լուսաշխատավորները աշխատավորների այն բանակն են, վորին հանձնարարված և մասսաներին լուսավորելու և բանվորական դասակարգի գործի համար մարտիկներ, կոմմունիստական հասարակության կառուցողներ նախապատրաստելու նպատակով աճող սերունդը դաստիարակելու պատասխանատու աշխատանքը, համագումարն առանձնապես ընդգծում և լուսաշխատավորների քաղաքական լուսավորությունը, իբրև նրանց արտադրական և հասարակական աշխատանքի հաջողության ամենաահճարժեշտ պայմաններից մեկը:

Ներկայում ճիշտ հիմքերի վրա դրված քաղաքական լուսավորության նշանակությունն ել ավելի լի մեծունում նրանով, վոր ժամանակակից քաղաքական պայմաններում հնարավոր և, վոր բանվոր դասակարգին ուսար դաշտափարական հայտցքների ազգեցությունը ուժեղանա լուսավորության աշխատանքի մեջ տարվող լայն հասարակական կուլտուրական աշխատանքի մեջ, նպատակ ունենալով ամրացնելու յերկրի սոցիալիստական շինարարությունը:

Քաղաքական, արտադրական և արհեստակցական լուսավո-

րությունը մնալով միութենական կուլտաշխատանքի համար իրը հիմնական նկողեր, պետք և զարգանա միութենական մասսաների ընդարձակված և խորացած պահանջներին համապատասխան:

Միաժամանակ համագումարը միության մարմինների ուշագրությունն և հրավիրում այն բանի վրա, վոր իրենց կուլտաշխատանքի ասպարեզում քաղլուսավորությունը միշտ կերպով ներդաշնակվելու լի լուսաշխատավորի այլ բաղմազան կուլտուրական պահանջները բավարարելու հոգսերի հետ (ձգումն գեպի ընդհանուր կրթություն, հանգիստ, խելացի ժամանց և այլն):

3. Զգաելով զրավելու միութենական կուլտաշխատանքի մեջ գեռ և այդ աշխատանքով չընդգրկված լուսաշխատավորական խմբերին, զարգացնելու միության բոլոր խավերի ակտիվությունը ու ինքնազործունեյությունը, միության մարմիններն իրենց աշխատանքը կառուցելու յեն, հիմք ընդունելով միության զանազան խմբերի այն առանձնահատկությունների հաշվառումը, վոր կան նրանց կյանքի, աշխատանքի, կուլտուրական պահանջների պայմաններում: Նըրազգաց վերաբերմունքը դեպի նման պահանջները, տարբեր խմբերի մեջ աշխատանքի հատուկ մեթոդների գործադրությունը չպետք և նպաստեն նրանց մեջ համբարականություն զարգացնելու, այլ պետք և նպատակ ունենա ավելի լավ կերպով և բավարար չափով սպասարկել նրանց՝ ընդհանուր դաստիարակման ուղղությամբ:

Մատնանշելով, վոր բոլոր խմբերին, միութենական կուլտաշխատանքով ըստ կարելուն լրիվ սպասարկելու անհրաժեշտությունը, լուսաշխատավորների համագումարն ընդգծում և, վոր միութենական մարմինների պարտականությունն և հետագայում ևս չթուլացնել իրենց ուշաղրությունը զեպի զուղական լուսաշխատավորը, մասնավորապես զեպի այն լուսաշխատավորները, վորոնք ավելի հեռու յեն ուսյոնների և զավառակների կուլտուրական կենտրոններից:

4. Կուլտաշխատանքի ուժեղացող նշանակությունը, նրա լայն թափը, նրա առանձին բնագավառների զարգացումն ու խորացումը միութենական կազմակերպությունների առաջ զնում և ուշաղրությունը զեպի նա ուժեղացնելու, զեկավարման ձեերի և մեթոդների լավացման, կուլտաշխատավորների ավելի խնամքության և կուլտաշխատանքի նյութական բարպայի ուժեղացընա հարցերը:

ՀՈՒՍԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԾՈՆՔԸ

5. Համագումարն արձանագրում է, վոր միությունն ամբողջին բավականին աշխատանք և տարել լուսաշխատավորների լայն մասսաներին հասարակական աշխատանքի քաշելու համար։ Անցած ժամանակաշրջանը բնորոշվում է լուսաշխատավորների հասարակական-քաղաքական ակտիվության արագ աճմամբ նրանց լայն կերպով հասարակական-կուլտուրական աշխատանքի ներզրագելով, ինչպես նաև վոչ միայն գյուղական, այլ և քաղաքի լուսաշխատավորի խորհրդային շինարարության մեջ ակտիվ մասնակցությամբ։ Հասարակական աշխատանքի լին լծվում վոչ միայն մասսավիկ լուսաշխատավորը, այլ և միության անդամների վորակյալ խմբերը (գիտական աշխատավորները, ժուրնալիստների առանձին շերտերը և այլն)։

Այս խնդրում քաղաքի լուսաշխատավորի հետամնացությունը գյուղականից, վոր նկատվում եր անցյալում, վերջին տարիներս սկսել են նվազել։

Այդ աշխատանքի ասպարիզում ձեռք բերված մեծ նվաճումների, ազգաբնակչության մեջ, մանավանդ գյուղում ուսուցչի հեղինակության և դերի աճման հետ միասին, համագումարը մատնաշում և նաև աշխատանքի ընթացքում յերեան յեկած ուղեռ ևս չփրացված հետեւյալ բացերը, ակտիվիտաների ծանրարեռնվածությունն ի վեաս հիմնական աշխատանքի, տարվող աշխատանքի անսիստեմությունը, հասարակական աշխատանքի անվան տակ լուսաշխատավորների վոչ ուացիուալ ոգտագործումը տեխնիքական աշխատանքներով, հասարակական աշխատանքը պարտադիր կերպով հաշվի առնելու փորձերը առանձին միութենական մարմինների կողմից, փորձեր, վոր իրենց վրա կրում են հասարակական աշխատանքի գրավվածների քանակով տարվելու կնիք ի հաշիվ բուն աշխատանքի վորակի և բովանդակության։

6. Լուսաշխատավորներին հասարակական աշխատանքների գրավելը հանդիսանում է մասսաների քաղաքական դաստիարակության, նրանց մեջ կոլեկտիվիտական ունակություններ մշակելու լավագույն մեթոդներից մեկը։ Լուսաշխատավորների հետզետե ավելի լայն իսպեր հասարակական աշխատանքների գրավելու այդ աշխատանքը միությունը շարունակելու յե հետազտում ես, բայց միայն միության աղիտ-պրոպ աշխատանքի կար-

գով՝ մամուլում հասարակական աշխատանքների առանձին տեսակները լուսարաններու, ակումբների մասսայական ձեռնարկումների, փորձի փոխանակություն կազմակերպելու միջոցով և այլն, ըստ վորում, քաղաքի աշխատավորներին պետք ե հասարակական աշխատանքների գրավելը մասնավորապես աշխատելով մասսաներին (բանակումբները, կարմիր բանակը) սպասարկելու համար, իսկ գյուղական լուսաշխատավորներին՝ ոգնելու հոգանոտու միությանը բարորակության, ինչպես նաև գյուղացիության ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում։

Հասարակական աշխատանքի սացիոնալիզացիալի և ազգարնակչության մեջ ուսուցչի և գպրոցի հեղինակությունն ուժեղացնելու նպատակով համագումարը ճիշտ և համարում ուսուցչի հասարակական աշխատանքը դպրոցի հասարակականապես ոգտակար աշխատանքի հետ սերտորեն կապելու գիծը։ Բայց դա ի հարկի չի բացասում ուսուցչի հասարակական աշխատանքը դպրոցից զուրս, իր ընդհանուր քաղաքացիական պարտականությունները կատարելու կարգով (խորհրդի անդամ, աշխատանքի իրեն ժողատեսնակալ և այլն)։

Մատնանշելով այն հսկայական գերը, վոր լուսաշխատավորների հասարակական աշխատանքին ոժանդակություն կազմակերպելու գործում ունի միութենական մամուլը, մանավանդ «Սկիտելյան Գազետ»-ն և «Հարօնի Սկիտել»-ը, համագումարն անհրաժեշտ և համարում այդ հրատարակությունների համապատասխան բաժինների հետագա ամրացումը։

Լուսաշխի տների սիստեմում հասարակական աշխատանքի հապոնկ հանձնաժողովներ ստեղծելու, հասարակուկան աշխատանքի անկայուններ կազմակերպելու, փորձառության փոխանակության փրեկոններ անցկացնելու, գրադարանները տեղեկատու և մեթոդական գրականությամբ լրացնելու և այն միջոցներով լուսաշխի անկայունները և լուսաշխի տները հասարակական ջիզ ունեցող լուսաշխատավորի համար պետք ե գուման փորձի փոխանակման և հասարականորեն ակտիվի (օնացետենիկ) միութենական ոգնության կենտրոններ։ Լուսաշխատավորի հասարակական աշխատանքին ոգնելու կերպության մասին կարգությունները մարմիններն իրա-

կազմակերպությունները և հիմնարկությունները։

Լուսաշխատավորների հասարակուկան աշխատանքի կարգավորման մասնակցությունը միութենական մարմիններն իրա-

Կանացնում են միայն քաղլուսկենաբոններում իրենց ներկայաց յուցիչների մասնակցութիւն միջոցով:

Համագումարն հանձնարարում է կկ մշտկել լուսաշխատավորի հասարակական աշխատանքն ուսումնասիրելու ձևերն ու մեթոդները:

ԵՎՐԱՍՏԱԾԱՌԳԱՅՈՒՄՆԵՐ

7. Վերջին տարիներս լուսաշխատավորական մասսանների լայնորեն ծավալված ինքնազարգացման աշխատանքը հետեւանք է դեպի գիտություններն ունեցած այն հակայական ձգումի, վօրը խթանվում է լուսավորության աշխատավորների կյանքի և աշխատանքի պարագաներուց: Նրանց հետաքրքրությունը հիմնականում ընթանում է ընդհանուր, քաղաքական, մանկավաճական և արհեստակցական լուսավորության գծերով:

Հաշվի առնելով ինքնազարգացման իրեն մասսանների կուլտուրական պահանջները բավարարելու, հզոր ուղիներից մեկի, հսկայական նշանակությունը, ընդգծելով, վոր ինքնազարգացման աշխատանքն ամրողովին կառուցվում է կամավոր սկզբունքներով և անհատական առանձնահատկություններին ու պահանջներին համեմատ, համագումարն համարում է, վոր միութեական կուլտաշխատանքի հիմնական խնդիրներից մեկը հանդիպանում և լուսաշխատավորներին, ինքնազարգացման գործում, բազմակողմանի ոգնությունն ապահովելը, առանձին խմբերի հաշվառման հիմքունքներով:

8. Ապահովելով ոգնությունը թե անհատական և թե խմբական ինքնազարգացման աշխատանքներին, միութեական մարմինները ձեռք են առնելու բոլոր միջոցները, փորպեսզի ամենից քարձրացվի ամեն տեսակ ինքնազարգացման աշխատանքին փորակային մակարդակով, դնելով այն միշտ մեթոդական ուղիների վրա: Այդ նպատակով խմբակներում անհրաժեշտ է ապահովել աշխատանքի խսկական կոլեկտիվիզմ, վորպեսզի խմբակի ամեն մի անդամ անհատական աշխատանքի կարգով (տնախն) խորացրած ձեռք նախապատրաստվի այդ աշխատանքի համար: Միայնակների ինքնազարգացման աշխատանքն այնպես պիտի կառուցվի, վորպեսզի իր դարձացման մեջ այդ աշխատանքը առաջ ըրբի արդյունքների կոլեկտիվը ընդհանրացում (միայնակների կոնֆերենցիաներ և այլն): Այս և այլ աշխատանք-

ներում պետք է խուսափել ամեն մի շաբլոնից, հիշելով, վոր լուսաշխատավորական առանձին խմբերի մեջ գոյություն ունի պատրաստականության և հետաքրքրության խիստ բազմազանություն:

9. Լուսաշխատավորի ինքնազարգացման ոգնության միութեական մարմիններն են ինքնազարգացման ոգնող հանձնաժողովները, վոր կազմակերպվում են Միության մարզային, նահանգական և գավառակին վարչություններին կեց: Գովազներում ինքնազարգացման ոգնությունը գործի կազմակերպությունների ընկնում է գավառակային տեղկոմիների կուլտհանձնաժողովների վրա, վորոնք այդ աշխատանքն հանձնարարում են կուլտհանձնաժողովների առանձիներին: Միաժամանակ ինքնազարգացման ոգնության միութեական մարմինները պետք է ամեն կերպ ոգտագործեն կուսակցական և քաղլուսվարական մարմինների այս գործում ունեցած փորձը: Ինքնազարգացման խմբակներին և միայնակների ոգնությունն արդեն պետք է կառուցվի անհրաժեշտ ծրագրեր և ձևադրիչներ պատրաստելու գործի կենտրոնացման և խմբակների ու միայնակների աշխատանքի անմիջական զեկավարման ապահովենարոնցման սկզբունքներով:

10. Միութեական մարմինների կողմից ինքնազարգացման խմբակներին և միայնակներին տրվող ոգնության հիմնական ձեւերը լինելու լին:

ա) ապահովել ինքնազարգացմամբ պարապողներին լավ ծրագրերով և հանձնարարելի գրականության ցուցակներով.

բ) տալ ինքնազարգացմամբ պարապողներին կազմակերպչական-մեթոդական ցուցակները, հրահանգներ և այլն.

գ) արտօնչալ պայմաններով գրականություն:

դ) հանձնարարել խմբակների զեկավարներ, և հետազուտ ուղղություն տալ նրանց աշխատանքին.

ե) տալ խմբակներին և միայնակներին ըստ իրենց պահանջների բանափոր և գրավոր կոնսուլտացիա.

զ) խմբակների և միայնակների գրավոր աշխատանքները լինթարկել ուղցենազիայի.

